## Ընկերության ղեկավարության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ Ընկերության կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

Ղեկավարություն

| | | | |
|---|---|---|---|
| **Դավիթ Աթանեսյան** | **Գլխավոր տնօրեն** | | 29/08/22 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Գայանե Կորեկյան** | **Գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ** | | 29.08.2022 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

## ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

## <ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>ՈՒՎԿ ՍՊԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ կառավարման մարմնի՝ միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- **Ընկերության բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի ներկայացում,**
- **Կարևոր դեպքերի ներկայացում,**
- **Ընկերության հնարավոր հետագա զարգացման ներկայացում:**

Սույն զեկույցը պատրաստված է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների /ՖՀՄՍ/ համաձայն:

# ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Ընկերության ակտիվները կազմել են 7,191,144 հազ. ՀՀ դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալներով հազ. 7,134,009 դրամ: 2022 թ-ի առաջին կիսամյակում ակտիվները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են ՝ 57,135.0 հազ.դրամով:

| 1 | Ակտիվներ | *30.06.2022* | *30.06.2021* |
|---|---|---|---|
| 1.1 | Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ | 378,529 | 240,325 |
| 1.2 | Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ | | |
| 1.3 | Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 242,285 | 476,571 |
| 1.4 | Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ | | |
| 1.5 | Համախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ | 6,236,323 | 6,052,752 |
| 1.6 | Վաճառքի համար նախատեսված ներդրումներ | | |
| 1.7 | Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | | |
| 1.8 | Վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 22,921 | 24,270 |
| 1.9 | Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | | |
| 1.10 | Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում | 3,680 | 3,680 |
| 1.11 | Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում | 10,885 | 12,190 |
| 1.11.1 | Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | | |
| 1.12 | Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 268,393 | 286,477 |
| 1.13 | Հետաձգված հարկային ակտիվներ | 5,400 | |
| 1.14 | Ստացվելիք տոկոսներ | | |
| 1.15 | Այլ ակտիվներ | 25,424 | 39,093 |
| | ***Ընդամենը՝ակտիվներ*** | **7,191,144** | **7,134,009** |

## *Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ*

**Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին դիտվել է հաճախորդներին տրված վարկերի 183,571 հազ.դրամի աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, մնացորդները կազմելով 6,236,323 հազ. դրամ:**

**Ընկերության տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և վերջիններիս մեծամասնությունը դասակարգված է որպես ստանդարտ վարկ, ինչը վկայում է Ընկերության վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:**

**Ստորև ներկայացվում է վարկային ներդրումների և վարկերի արժեզրկման պահուստների փոփոխությունը 2022 և 2021 թթ. առաջին կիսամյակի դրությամբ:**

**1. Վարկեր հաճախորդներին**

| | ***2022թ.ի I-ի կիսամյակ հազ. դրամ*** | ***2021թ.ի I-ի կիսամյակ հազ. դրամ*** |
|---|---|---|
| Հաճախորդներին տրված համախառն վարկեր | **6,262,907** | **6,081,184** |
| Վարկերի արժեզրկման պահուստ | **(26,584)** | **(28,432)** |
| | **6,236,323** | **6,052,752** |

## *Արտարժութային գործառնություններ*

**Հաշվետու ժամանակահատվածում Ընկերության արտարժութային գործառնությունների ծավալներն աճել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ և ըստ արտարժույթների կազմել են.**
**ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 19,6 մլն. ԱՄՆ դոլար,**
**ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 1.7 մլն. ՌԴ ռուբլի,**
**Եվրոյով գործարքների ծավալը՝ 0.06 մլն. եվրո:**
**Վերը նշված արտարժութային գործառնություններից հաշվետու կիսամյակում ստացված զուտ վնասը կազմել է 14,641 հազ. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 26,841 հազ. դրամ վնասի դիմաց:**

## *Պարտավորություններ*

2022թ.-ի առաջին կիսամյակի ավարտին Ընկերության պարտավորությունները կազմել են 5,480,699 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են են 28,654 հազ. դրամով:

| Ֆինանսական պարտավորություններ | ***30.06.2022թ.*** | ***30.06.2021թ.*** |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Փոխառություններ և վարկեր | **4,998,777** | **4,922,875** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | **427,544** | **497,199** |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | **81,852** | **89,279** |
| | ***5,480,699*** | ***5,509,353*** |

**2. Ներգրավված վարկեր, փոխառություններ**

| | ***30.06. 2022թ.*** | ***30.06.2021թ*** |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Պետական մասնակցությամբ ֆինանսական կազմակերպություններ | **1,635,351** | **1,868,635** |
| Միջազգային ֆինանսական կազմակերպություններ | **2,874,041** | **2,758,048** |
| Ոչ առևտրային կազմակերպություններ | **49,582** | **58,518** |
| ՀՀ Կենտրոնական բանկ | | |
| Բաժնետեր | **47,538** | **136,328** |
| Այլ կապակցված կողմեր | | |

| | | |
|---|---|---|
| Այլ | 364,791 | 101,346 |
| Թողարկված արժեթղթեր | 427,544 | 497,199 |
| | ***5,398,847*** | ***5,420,074*** |

2022թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերությունն ունի երեք կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ,ինչպես նաև թողարկված և տեղաբաշխված արժեթղթեր, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2022թ. հունիսի 30-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 4,509,392հազ. դրամ

**30.06.2022 թ. դրությամբ Ընկերության՝ հիփոթեքով ապահովված արժեթղթերի ներկա արժեքը կազմել է 427,544 հազ դրամ:**

**1. Թողարկված պարտքային արժեթղթեր**

| | 2022թ.ի I-ի կիսամյակ | 2021թ.ի I-ի կիսամյակ |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Պարտատոմսեր ամորտիզացված արժեքով | **427,544** | **497,199** |
| | **427,544** | **497,199** |

Կիսամյակի ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ:

***Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը կատարել է 16,788.2 հազ.դրամի արժեկտրոնների հերթական վճարում :***

Թողարկված պարտատոմսերը ներառում են հետևյալ թողարկումները՝

| | Թողարկման ժամկետ | Արժույթ | Քանակ | Եկամտաբերություն | Մարման ժամկետ | Անվանական արժեք |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | **2022թ.** |
| | | | | | | **հազ. դրամ** |
| Անվանական արժեկտրոնային պարտատոմս (ապահովված) | 2020թ. մայիս | ԱՄՆ դոլար | 8,000 | 6.40% | 2023թ. մայիս | **325,768** |
| Անվանական արժեկտրոնային պարտատոմս (ապահովված) | 2020թ. մայիս | ՀՀ դրամ | 10,000 | 10.50% | 2023թ մայիս | **100,000** |
| | | | | | | **425,768** |
| | | | | | | |

Պարտատոմսերը ապահովված են Ընկերության հիփոթեքային վարկերի պորտֆելով:

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում:

## *Ընդհանուր կապիտալ*

Հաշվետու կիսամյակի ավարտին Ընկերության ընդհանուր կապիտալը կազմել է 1,710,445 հազ. դրամ:

| *Սեփական կապիտալի տարրերի անվանումը* | *Կանոնադրական կապիտալ* | | *Չբաշխված շահույթ/(վնաս)* | *Ընդամենը* | *Ընդամենը կապիտալ* |
|---|---|---|---|---|---|
| | *Կանոնադրական կապիտալ* | *Զուտ գումար* | | | |
| Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ) | | | | | |
| *Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2021թ. (ստուգված)* | 1,000,000 | 1,000,000 | 621,372 | 1,621,372 | 1,621,372 |
| Վերահաշվարկված մնացորդը | 1,000,000 | 1,000,000 | 621,372 | 1,621,372 | 1,621,372 |
| Համապարփակ եկամուտ | | | 3,284 | 3,284 | 3,284 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| *Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիսի 2021թ. (ստուգված)* | 1,000,000 | 1,000,000 | 624.656 | 1,624,656 | 1,624,656 |
| Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ) | | | | | |
| *Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2022թ. (ստուգված)* | 1,000,000 | 1,000,000 | 633,646 | 1,633,646 | 1,633,646 |
| Վերահաշվարկված մնացորդը | 1,000,000 | 1,000,000 | 621,372 | 1,621,372 | 1,621,372 |
| Համապարփակ եկամուտ | | | 76,799 | 76,799 | 76,799 |
| *Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիսի 2022 թ.* | 1,000,000 | 1,000,000 | 710,445 | 1,710,445 | 1,710,445 |

# ***Եկամուտներ և ծախսեր***

Հաշվետու տարում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Ընկերության զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները աճել են 28,687 հազ. դրամով՝ կազմելով 164,446 հազ. դրամ:

**1. Զուտ տոկոսային եկամուտ**

| | ***2022թ.ի I-ի կիսամյակ*** | ***2021թ.ի I-ի կիսամյակ*** |
|---|---|---|
| | ***հազ. դրամ*** | ***հազ. դրամ*** |
| ***Տոկոսային եկամուտ*** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 333,383 | 306,601 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 12,066 | 18,456 |
| | | |
| | **345,449** | **325,057** |
| | | |
| ***Տոկոսային ծախս*** | | |
| Ներգրավված վարկեր, փոխառություններ | (163,162) | (170,949) |
| Թողարկված արժեթղթեր | (17,841) | (18,349) |
| | | |
| | **(181,003** | **(189,298)** |
| | | |
| Զուտ տոկոսային եկամուտ | **164,446** | **135,759** |

Հաշվետու կիսամյակում Ընկերության եկամուտների կազմում կոմիսիոն վճարներից ստացված զուտ եկամուտները կազմել են 19,413 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելեն են 10,572 հազ. դրամով:

**Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2022 թվականի առաջին կիսամյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ Ընկերության եկամուտների և ծախսերի կառուցվածքը:**

| | *2022թ-ի առաջին կիսամյակ* | *2021թ-ի առաջին կիսամյակ* |
|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 345,449 | 325,057 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | (181,003) | (189,298) |
| **Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ** | **164,446** | **135,759** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 20,257 | 9,422 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | (844) | (581) |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/( վնաս) | 2,006 | (28,806) |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/( վնաս) | (16,647) | 1,965 |
| Այլ գործառնական եկամուտներ | 3,608 | 2,500 |
| **Գործառնական եկամուտներ** | **172,826** | **120,259** |
| Վարկերից և այլ փոխատվություններից առաջացած կորուստներ | 33,069 | (230) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (102,739) | (100,027) |
| Այլ գործառնական ծախսեր | (6,471) | (4,411) |
| | | |
| **Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը** | **96,685** | **15,591** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | (19,886) | (12,307) |
| **Ժամանակաշրջանի շահույթ** | **76,799** | **3,284** |

## *Ամփոփ ֆինանսական տվյալներ*

| | | 2022թ.ի I-ի կիսամյակ հազ. դրամ | 2021թ.ի I-ի կիսամյակ հազ. դրամ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ | | 378,529 | 240,325 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | | 242,285 | 476,571 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | | 3,680 | 3,680 |
| Հաճախորդներին տրված վարկեր | | 6,236,323 | 6,052,752 |
| Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ | | 288,618 | 321,588 |
| Ընթացիկ հարկային ակտիվ | | | 0 |
| Այլ ակտիվներ | | 30,824 | 39,093 |
| | | | |
| *Ընդամենը ակտիվներ* | | ***7,191,144*** | ***7,134,009*** |
| | | | |
| Պարտավորություններ | | | |
| Ներգրավված վարկեր, փոխառություններ | | 4,998,777 | 5,678,085 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | | 427.544 | 497,199 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | | | 13,587 |
| Այլ պարտավորություններ | | 54,378 | 75,692 |
| | | | **5,509,353** |
| Կապիտալ | | | |
| Կանոնադրական կապիտալ | | 1000,000 | 1,000,000 |
| Կուտակված շահույթ | | 710,445 | 624,656 |
| Ընդամենը կապիտալ | | **1,710,445** | **1,563,379** |
| *Ընդամենը պարտավորություններ և կապիտալ* | | ***7,191,144*** | ***7,134,009*** |

## *Կարևոր դեպքերի ներկայացում*

*Հաշվետու ժամանակաշրջանի սկզբից ընկերության գործունեությունում նշանակալի դեպքեր տեղի չեն ունեցել :*

## *Ընկերության հնարավոր հետագա զարգացման ներկայացում*

Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են ընկերության ռազմավարական զարգացման հեռանկարներով, ուստի ընկերությունը կարևորում է հետևյալ առաջնահերթությունները՝

- Ներգրավել նոր հաճախորդներ բավարարելով նրանց ֆինանսական պահանջները և աջակցել նրանց հասնել հաջողությունների՝ ապահովելով սպասարկման բարձր որակ և ծառայությունների հասանելիություն ինչպես ընկերությունում այնպես էլ հեռահար ծառայությունների բոլոր եղանակներով:
- աշխատակիցների որակավորման բարցրացումներ կազմակերպական և արտաքին դասընթացների միջոցով
- Ընդլայնել գործարար հարաբերությունները
- Գրավել նոր վարկային միջոցներ
- Վարկավորման գործընթացների օպտիմալացում ՝նոր համակարգերի մշակման և ներդրման միջոցով
- Վարկային նոր պրոդուկտների մշակում